

ՄԱՇՏՈՑԱԿԱՆ

Ա.

ԱՅԲԻՆԱՐԱՆ

Ձեմ դիտեր ե՞րբ մայրըս դըրաւ ափերուս
Այբբենարան մը փոքրիկ.
Ե՞րբ նայեցաւ արեւուն հետ աչքերուս,
Յոյսը սրտին մէջ ծաղիկ:
Ա՛խ, դիտնայի, վայրկեանն այդ սուրբ դիտնայի,
Եւ սուրբի պէս պաշտէի:

Մեռած է մայրս, անցած են շատ տարիներ.
Բայց սրտիս մէջ ամէն օր
Տառերն եղան սուրբի մասունքը շնորհարեր.
Մօրս աչքերուն պէս աղուոր
Ամէն այգուն արշալոյսին հետ եկան,
Եկան, սիրոյ փսխուեցան:

Ամէն անգամ որ ձեռքերուս մէջ կ'առնեմ
Խորենացի կամ Նարեկ,
Այբբենարանն այդ հընամեայ կ'երազեմ
Ու վը տխրիմ սրտաբեկ.
Հըրաշք ըլլար, հըրաշքն ալ աւելի,
Ես այբ-բեն-դիմ հեղէի:

Մայրըս տեսնէր աչքերուս մէջն անհամար
Աստղի փոխուած ամէն տառ.
Հին օրերու տեսիլքով սի'րտըս կարգար,
Կարգար եւ ինձ մօտենար,
Ձեռքին մէջ նոր այբբենարան մ'ոսկեղիր,
Ըսէր, ո՛րդեակ սրտիդ դիր:

Ըսէր եւ իր սուրբ մատներովդ ցոյց տար
Դէմքն հընամաշ այն Սուրբին,
Որ խորհուրդ էր, սրտին՝ տառեր, ինձ համար:
Թէպէտ հիմա դըժեցին
Ոսկի պատկեր, բայց դէմքին հետ մայրենի,
Այդ հին սո՛ւրբն ես սիրեցի:

Բ.

ԱՂՕԹԱՄՍՏԵԱՆ

Տուր որ պարզեմ ձեռքերըս, Տէր,
Հայրենական
Հողին վըրան,
Ձերդ անդամտան կիրակնօրեայ.
Օրհնեմ խունկով Հայոց դաշտեր,
Որ տուներէն ծուխ բարձրանայ
Եւ աղութին շուրջը նստին,
Նարեկն ալ հոն անչէջ ճըրադ՝
Երկնքէն կախ,
Բոցը խաղաղ,
Եւ ծերերուն ու մանուկին
Աչքերուն մէջ դառնայ հրեշտակ:

Տուր որ պարզեմ հաւատքըս, Տէր,
Իբրեւ դրօշակ
Եւ Յաղթանակ
Մարտիրոսի արիւնով ներկ,
Վըրան դըրուած ոսկի «Հայր մեր»,
Եւ յոյսի դեղ եւ սրտի երգ.
Ծիածանուած հազար դոյնով
Հազար կեանքի զարունի պէս,
Ու զայն պարզեմ
Դարերու դէմ,
Մեարոպի հին տեսիլներով,
Արտաշատի օրերն ինչպէս:

Տուր որ պարզեմ իմ Յոյսըս, Տէր,
Ձերդ անըստուեր
Կեանքի պատկեր,
Եւ ես անցնիմ հովիտ ու լեռ,
Ամէն աւեր տունի դիմաց
Մ'ոմ վառելու, բոցն աղօթիկեր.
Եւ մամոսպատ քար մը դրկած
Եղունվներով քանդակեմ ես
Երկաթադիր,
Աստուածալիր
Տառերն Հայոց կըրակ դարձած,
Երկնահըրաշ տեսիլքին պէս:

Տուր որ պարզեմ իմ Սէրըս, Տէր,
Կարմիր արեւ
Հազարաթեւ,

Որ սրտին մէջ հայ պանդուխտին
 Հեղում բաժակ արիւնով եռ.
 Սորհուրդ անտես եւ անքնին
 Սեղաններուն մեր հայրենի,
 Հոն քահանայ Մեսրոպ-Մաշտոց,
 Ծըրթունքներու
 Հաղորդ տալու,
 Պըտղունց մը հաց, շիթ մը գինի,
 Անմահութիւն եւ սրտի բոց:

Տուր որ պարզեմ աչքերըս, Տէր,
 Վերին կապոյտն
 Աներեւոյթ,
 Հոն ուր հաղար աչքեր դարձան՝
 Փոթորիկն երբ կը սասանէր
 Հողն հայրենի, տունն Հայութեան:
 Տուր որ ըլլայ երկի՛րը մեր
 Տենչանքներու արքայութիւն,
 Եւ ամէն Հայ
 Սիրտ մ'ունենայ,
 Լեզուն՝ զանգակ աւետարեր,
 Վերադարձող հին օրերուն:

Գ.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆ

Դուն եկար անցար ամէն քերթողի
 Երազէ երազ, արիւնէ արիւն.
 Հըպեցար ամէն արծաթէ լարի
 Տալու եղանակ եւ յաւերժութիւն:

Միշտ դուն ընտրեցիր սրտերու խօսող
 Բառեր ծիրանի, խորհուրդներ թաքուն.
 Ափով ցանեցիր արեգակի շող
 Որ բոց ըլլայ մեր բանաստեղծութիւնն:

Դուն եկար անցար հիւզակէ հիւզակ,
 Սըրինգ մը տալու աղքատ աշուղին.
 Սիրտ էր ամէն բառ, ամէն լար՝ սոխակ,
 Ու մեզ հետ լացաւ մարդկութեան հողին:

Դուն եկար անցար ծովակէ ծովակ,
 Նարեկին տալու ողբ ալետատան,
 Ու Սայեաթ-Նովան քու թեւերուդ տակ
 Սիրոյ հետ խաղաց, կոտրեց քամանչան:



Դիմեալ աւետարանիչք է բարեխօս լինի գեօրկու

Ու եթէ կրկին դայիր երկնքէն
Այցելու ծաղկած հայրենի աշխարհ.
Ո՛վ Հացեկացի, կ'երզնում թէ նորէն
Պիտի լայիր դու տառերուդ համար:

Դ.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ

Թէ խնդրեմ հազար արեւ ու լուսին,
Անանց կըրակով հողիս վառելու,
Չեմ կրնար կարգալ էջերն այն Գրքին
Որ տըւաւ հայոց ոսկեղէն լեզու:
Եղաւ տապանակ,
Հայկի՛ պարունակ:

Անհունէ անհուն թեւերըս պարզած
Կանչեցի Մեսրոպ, կանչեցի Սահակ,
Ըսի ծընրադիր. — Ցոյց տըւէք Աստուած,
Որ դուք սըրբութեան արցունքով գըտաք.
Բացիք նոր երկին
Հայոց աշխարհին:

Կարծես դաշտ ու ձոր մազաղաթ դարձան,
Լիճերը թանաք, տենչերն ալ եղէզ,
Աստուծոյ ձայնին եղան նոր թարգման,
Չարկին Սաղմոսի լարերը մէկ մէկ,
Սրտով խանդավառ,
Լացին մեզ համար:

Հոն ուր խաւարն էր յօյսի վարագոյր,
Եւ արփին անտես, սիրտը չղթալուած,
Հայաստանն ըրին իմաստութեան քոյր,
Չինեցին հանճարն եւ եղեւ աստուած,
Բացին իրար հետ
Հաւատք ու գըմբէթ:

Տեսայ, հողեղէն աչքերով տեսայ,
Որ մեր դաշտերէն Աստուած կը չըջէր.
Եղեմի բերկրանքն ես այնտեղ գըտայ
Ամէն տան մէջ լոյս, եւ ամէն աչք՝ սէր,
Եւ Աստուածաշունչն
Ամէն սրտի հունչ:

Ո՞ր արեւն հիմա սիրով չի վառեր
Մեր ժամերուն խաչն ու Աւետարան.

Ո՞ր սիրտն հայրենի սիրով չ'երազեր
Արշալոյսին հետ կարգալ այդ Մատենն,
Մեսրոպի դիմաց
Գետին խոնարհած:

Տեսայ, հողեղէն աչքերով տեսայ,
Որ մեր դաշտերէն Աստուած կը շըրջէր.
Եւ հետքն անոր սուրբ՝ ոսկեղէն ճամբայ.
Տեսայ ժողովուրդ, տեսայ արքաներ,
Եւ սուրբ Մեսրոպի
Ձեռքերը պաղի:

Ե.

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Եկուր, կարգանք խորենացին միասին,
Եկուր, լըսենք ծովու հառաչ, հովի ձայն.
Աստուած դիտէ ճամբան մեր սուրբ պատմութեան
Մէկ ծայրն արեւ, միւսը խորհուրդ անընդին:

Եկուր, երդնունք դիւցազներու անունով
Կրկին անգամ դէպ' Աւարայր մեկնելու.
Եւ Եղիշէն պարզենք դըրօշ փառքերու
Որ Հայութեան սրտերը դան իրար քով:

Եկուր, անցնինք մատենաներէն պատմադիր
Անուն փնտռենք, փառք եւ արիւն ծովացած,
Երկաթադիր տառը տառին շղթայած,
Յանկենք նորէն մեր հորիզոնն ոսկեծիր:

Եկուր, կարգանք դամբանադիր պատմութիւն,
Քարէ արցունք, ոսկի երազ ու վըրէժ.
Լոյսի տենչ է, փառքի երթ մեր ուխտն յաւերժ,
Եւ Մաշտոցի տեսիլներու կրկնութիւն:

Զ.

ԶԱՐԴԱՆԿԱՐ

Ո՞ր աստուածուհին իջաւ երկնքէն
Կամարէ կամար ժանեակ հիւսելու.
Ո՞ր աստղը սիրեց, կանչեց հեռուէն.
Ծիրանի դօտի քարերուն տալու:

Հաղար խաչ դըծեց, հաղար սիրտ դըրաւ
Հաղար երգ կանչեց, թռչուններ ելան.
Մեր ո՞ր դարունէն ճառագայթ առաւ,
Հիւսելու ոսկի ողկոյզ ու շուշան:

Երբ հուրով եկան բանակներ անթիւ,
Ամէն քարի դէմ դարձան անշարժ քար.
Լոկ Աստուած գիտէր զարգերուն հաշիւ,

Եւ այնպէս սիրեց խոյակ ու կամար,
Մատները դըրաւ մեր հողին վըրան
Անունն իր կնքեց տառերով հայկեան:

Է.

ՏԱՊԱՆԱՔԱՐ

Մայրն ի՞նչպէս արցունքն հողին հետ խառնէր՝
Թէ չըզար Մեսրոպ զայն հաւաքելու.
Ի՞նչպէս իր ողբին քերթուածը դըրէր՝
Թէ չըտար Մաշտոց դըրիչ ու լեզու:

Եւ ամէն շիրիմ կոխան պիտ' ըլլար
Եւ հողին հետ հող պիտ' ըլլար մարմինն.
Մօր սիրտն ալ մոլոր ինկած ճանապարհ,
Ձուր պիտի փնտռէր իր մեռած որդին:

Բայց հիմա երբեք մարդիկ չեն մեռնիր.
Քար կու տայ Հայոց երկիրն ամէնուն.
Կ'իջնեն երկնքէն տառեր ոսկեծիր,

Կնքելու յաւերժ սիրոյ հետ անուն.
Երբոր դայ Ձատիկ եւ դայ Մեռելոց,
Ինչ հե՛շտ է կարգալ սրտէն «ի խորոց»:

Ը.

ԵՐԿԱԹԱԳԻՐ

Ճգնարանի որմերուն տակ սեւաթոյր
Լապտեր մը կայ պըսպըղուն,
Լապտեր մը կայ ամէնուն.
Եւ ամէն դէմք, խոկումներու վարագոյր,
Հակած, անխօս, մաղաղաթի մը դեղին,
Դուռն երազեց կրկին բանալ դըրախտին:

Ու գլրեցին հաղար վանքեր, հաղար տեղ,
Մաղաղաթէ մաղաղաթ.
Անցան դարեր ըղձակաթ.
Մերտը մէկուն եղաւ միւսին կարմիր դեղ,
Մատը մէկուն՝ միւսին գլրիչ եղէպնեայ,
Ու գլրեցին աշխարհս ինչ որ հրաշք կայ:

Հաւատացին ճգնարանէ ճգնարան
Այս հոգեբուխ աղօթքին.
Առանց խունկի սուրբ զոհին.
Հաղար աչքեր, իրարու դէմ ծաղեցան
Բացուեցան միշտ, չըփակուեցան ալ անվերջ,
Կերոնն ինչպէս Աստուծոյ սուրբ ձեռքին մէջ:

Գլրեցին երգ, Աստուծոյ խօսք, մարդու սէր,
Որինդ էր ամէն ձեռագիր.
Ոսկի շղթայ ամէն գիր.
Մէկը գլրաւ իր աչքի լոյսն անըստուեր,
Միւսը խնկեց չունչը բուրեան հողիին,
Ու գլրեցին հաղար վանքեր միասին:

Իմաստութեան ճաճանչն հասաւ տունէ տուն,
Եղաւ տանիք հաւատքի.
Եղաւ հրեղէն սիւն վանքի.
Եղաւ սիրոյ կըրակարան ամէնուն.
Ու վառեցաւ, վառեցաւ գերդ արդար եղ,
Ու գլրեցին հաղար վանքեր, հաղար տեղ:

Հաւաքեցին մեր երկնքի թըռչուններ,
Ափերն իրենց բոյն ըրին.
Շուրջը վարդեր չարեցին.
Առտըն տեղ՝ երկինքն ոսկի գիպակ էր,
Լապտերին տակ երգ լըսեցին սրտազեղ
Ինչպէս ունի կանաչ դարունն ամէն տեղ:

Ո՛րքան վրկայ. եւ հայրապետ ու կուսան
Այնտեղ ժպտիլ տենչացին,
Այնտեղ նայիլ երկնքին.
Գէթ իրենց սիրտն այնտեղ մըլտայ յաւիտեան,
Մեր ցաւն առնեն, մեր արցունքէն չիթ մ'առնեն,
Աղբիւր դառնայ՝ երբոր մարդիկ ծարաւ են:

Այնքան երկաթ ո՞ր հանքերէն հանեցին,
Քանի՞ դարբին իրար քով
Մուրճը դարկին քրտինքով.
Կայծեր թըռան, բոցը գլրիչ դարձուցին,

Ու կոչեցին երկաթեղէն ձեռագիր,
Որովհետեւ վահան էր նա, եւ ոչ գիր:

Ու գլրեցին հաղար վանքեր հաղար տեղ
Մինչեւ արփին խոնարհէր,
Մինչեւ լապտերը ճղնէր.
Տըւաւ անոնց սիրտն Հայաստան հացի տեղ,
Ու նայեցաւ Մաշտոցն հեռու երկնքէն,
Հաղար արցունք թափեցան իր աչքերէն:

Թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ձեմ գիտեր թէ քանի՞ հաղար մուրճ եւ դուր,
Քանի՞ միլիոն սուր հարուած,
Կայծ հանեցին քարէ քար,
Քանի՞ իշխան, վարդապետներ ոսկեխոյր
Ըսին. — Վարպետ, մեղ համար
Յաւերժութեան դուռը բաց: —

Եւ ամէն ոք քար մը գրկած թեւին տակ,
Ինկաւ հեռու ճանապարհ,
Ուր որ քաղաք հիմնեցին,
Ուր վանդնեցին եկեղեցի եւ դրդեակ՝
Հոն կանգ առաւ, սրտազին
Քարին վըրայ դըրաւ քար:

Հաղար վարպետ իրարու քով, իրար հետ
Հարուստին հետ եւ աղքատ,
Քանդակեցին ամէն տեղ
Խորհուրդ խորին, խաչի թեւեր արփաւէտ
Համբուրեցին երգ ու պատ՝
Աստուածաշունչ գրքին տեղ:

Ո՞ր հայն երբեք չունէր սրտի պաղատանք
Կերտելու տուն եւ տաճար,
Ո՞վ երկնքէն խօսք չուղեց
Ոսկի տառով ընդելուզուած, միավանկ
Որ Արարչին պէս ըլլար
Երբ ոչինչէն ըստեղծեց:

Դարերն եկան ամբողջի պէս, ծովու պէս,
Եկաւ ժառանգին Հայութեան,
Գեղջուկն եկաւ գլխաբաց,

Ու կարդացին տառը տառով հըրակէղ
 Խաչի մը տակ սեպացած.
 «Ի յիշատակ անմոռաց»:

Ի յիշատակ թաղապըսակ Անիին
 Ամէն քարի խօսք տըւին,
 Ամէն կոթող եղաւ սուր,
 Ամէն դմբէթ եղաւ երկնի բանալին,
 Պարիսպներու տակ կրկին
 Եղաւ ամէն բառ փրփուր:

«Ի յիշատակ անմահութեան հայ ցեղին»,
 Հայ հանճարին յիշատակ.
 Պարիսպ հըղօր դեղջուկին,
 Արեւաբաց մատեան ընդդէմ խաւարին,
 Անջնջելի յաղթանակ,
 Մատնադըրոյժ Մեսրոպին:

Ի՛նչ փոյթ թէ զան հող եւ մամուռ ծածկելու
 Անուն եւ սիրտ քանդակուած,
 Ի՛նչ փոյթ, որմեր փըլատակ
 Իրար յեցած, անօղնական իրարու.
 «Ի յիշատակ անմոռաց»
 Մեսրոպի ձեռքն է պըսակ:

Վենետիկ, 30 Դեկտ. 1962

Հ. ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

ԳԵՂՈՆ Ա. Բ. Գ. ԻՆ

Մեսրոպ Մաշտոցի ծննդեան
 1600ամեակի յորելեանին

Անմահութեան անհերքելի՛ ապացոյց,
 Բաց բեւեռնե՛ր բերկրանփի...
 Գարնանային գեղեցկութեանց գանձարան,
 Դարերու դո՛ւտ դափնեգարդ,
 Երագի երթ ու երջանիկ ժամանում...
 Զըւարթնոցի գանգատա՛ն գրահներ,
 Էական հիմ ու սիւնաշա՛րփ հոյաշէն,
 Ընթացփ, ոստո՛ւմ անհունի...:
 Թըռիչփ միշտ վեր՛ դէպի լուսեղ ապագան,
 Ժամանակին քեւերուն վրայ պողպատի...:
 Իմաստութեան ջի՛նջ ակունք,
 Լինելութեան անժխտելի՛ երաշխիփ,
 Խորհրդանի՛շ խորութեանց,
 Ծիածանի ծըփանփ ու ծո՛վ ծիրանի...
 Կարմիր արիւն վարդանանց,
 Հաւատփ եւ հո՛ւր հոգիի.
 Զա՛յն, արձագանգ դաշնագեղ,
 Ղօղանջ եւ երգ, մեղեդի...
 Ճըրա՛գ անմար, հշմարտութեա՛ն հայելի,
 Մագնիսական մարգարիտնե՛ր մըտածման,
 Յաւէտ յորդող մեղրագետնե՛ր հըմայփի:
 Նետե՛ր սլացիկ, նոր հրթիռնե՛ր լուսեղէն,
 Շողե՛ր հրաքեւ՝ միջաստեղեան արշալի...
 Ոսկի որա՛յ, ոսկեհա՛նփ:
 Զինարի ծառ, ուր կոմիտասն երաժիշտ՝
 Պրիսմակի պէս սրտին երազն հոն վառեց...
 Զուրերու վրայ նունուփարնե՛ր էփ ծըփուն,
 Ռումբերու պէս հըրախաղե՛ր աստղամերձ,
 Սօսեաց Անտա՛ռ սիրերգակ՝
 Վասն հայրենեաց ընձիւղած...:
 Տալի՛ղ, ծնծղա՛յ, նախերգանփ...